լինիլ նման նմա՝ խոստանամք, բայց վախճան նորա ուր եհաս՝ ձեզ թողումք իմաստասիրել, և ճանաչել զՍուլթան Մահմուտ։ Ես ոչ առնեմ ասէ ըստ նախորդին իմոյ՝ զի նա յիմարութեամբ իւրով էանց անդ քան զչափ, ոչ զիսոստացեալն կատարեաց և ոչ զպահանջն էառ 'ի ձէնջ, և 'ի վերջոյ վտանգեցաւ, այլ ես 'ի գլուխս տարեալ զգործն առնում զինչս ձեր եւ տամ պատասխանի հարցանողաց։ միայն մի յայտնէք զգումարն, զի մի այլք ագահեսցին։ և նոքա ասեն՝ դիւրին արտասանին բանք այլ կարի դըժուարին է տալ պատասխանի յիւրում տեղւոջ, մանաւանդ զի ոչ կամիս կատարել զգործն հաւասար, այլ զայսոսիկ ծանուցուք Մերունեաց եւ Պատրիարքին, եւ դուք մի վշտացուցանէք զնուրի։ Դուք կատարեցէք ասէ զգործն իմ։ դիւրին է որսալ զկամն նորա, այլ արժան է ձեզ երթալ առ նա և ասել թէ միտք Դատաւորին է 'ի կողմն Ցունաց, և 'ի պահանջելն մեր զդատաւորութիւն հաւասար Ցունաց, վարանի 'ի միտս իւր՝ թէ եկեղեցին է 'ի ձեռս Ցունաց եւ Տէրութիւնն չէ գրեալ յայտնապէս վասն իրաց ձերոց, և կամ բառնալ զՑունացն։ վասն որոյ հարկ է միանգամ խորհիլ ընդ Դատաւորին և կատարել զգործն։

Եւ նոքա գնացին առ Նուրի և պատմեցին նմա ըստ բանից այսոցիկ, բայց գտին զնա վշտացեալ 'ի նմանէ սակս չյայտնելոյ և չիսօսելոյ ինչ զգործոյն։ և ցուցանէր գրել 'ի Կոստանդինուպոլիս եւ կամ գնալ անդր։ Եւ 'ի կարի թախանձելն Հայոց, յանձն առ երթալ առ նա և խօսիլ։ բայց 'ի կարծիս անկեալ ասէր։ զի՞նչ ինչ խօսիք 'ի գնալն ձեր առ նա։ մի գուցէ պահանջէ 'ի ձէնջ զյոլով դրամս։ եւ ձեր ոչ կարացեալ յանձն առնուլ այսպէս տատանի գործն։ Եւ նոցա չհամարձակեալ զստոյգն պատմել, ասեն՝ միթէ մարթ ինչ իցէ համարձակիլ յայդ աստիճան, որ ետես զվտանգ նախորդին իւրոյ, սակայն միտք նորա է իրաւախոհ առնել զմեզ։ եւ երբեմն 'ի բանս իւր յայտնէ երթալ 'ի Բեթղեհէմ 'ի քննութիւն։

Դարձ արարեալ անտի պատմեցին զայս ամենայն Պատրիարքին և Մերունեաց, և խորհուրդք ամենեցուն 'ի մի կայացան, չտալ ինչ նախ քան զկատարումն գործոյն, զի